ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
www.mlsa.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

LOFT

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԼՈՖԹ» ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Երեւան, 06 ապրիլ, 2023թ.

Նպատակ ունենալով համատեղել ջանքերը սոցիալապես անապահով մարզաբնակ ընտանիքների երեխաների, ինչպես նաեւ հաշմանդամություն ունեցող մարզաբնակ երեխաների ինքնակրթության, զարգացման, մասնավորապես ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու շուրջ՝ ապահովելով ընթերցանության համար հարմարավետ միջավայր, ինչպես նաեւ կրթական-սոցիալական նախաձեռնությունների շնորհիվ խթանել ընթերցանությունը, պատանիների եւ երիտասարդների քննադատական-վերլուծական մտքի զարգացումը՝ նրանց շրջանում հանրահռչակելով հայ ժամանակակից գրականությունը՝ մարզերում առավել հասանելի դարձնելով գրական կյանքի, հրատարակությունների մասին տեղեկություններն ու նորությունները,

Կարեւորելով «ԼՈՖԹ» կրթության, մշակույթի, երիտասարդության զարգացման համահայկական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) դերը հանրության եւ մասնավորապես պատանիների ու երիտասարդների շրջանում, ինչպես նաեւ մշակույթի, ոչ ֆորմալ կրթության, ինքնազարգացման ձեւաչափերի կիրառման եւ հաջողված ծրագրերի իրականացման արդյունավետությունը, նյութատեխնիկապես հագեցած հարթակներ ունենալու հանգամանքը, պատանիներին եւ երիտասարդներին մշտապես աջակցելու, վերջիններիս միջավայրային ներառականությանը նպաստելու արդյունավետ գործարկումը եւ հիմնական առաքելության՝ ինքնազարգացմանը նպաստելու իրականացումը, ինչպես նաեւ ոլորտային կառույցների հետ համագործակցության հնարավորությունները՝ **Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը** (այսուհետ՝ ՀՀ ԱՍՀ նախարարություն), ի դեմս նախարար

Նարեկ Մկրտչյանի, **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը** (այսուհետ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարություն), ի դեմս նախարար Ժաննա Անդրեասյանի եւ **«ԼՈՖԹ» կրթության, մշակույթի եւ երիտասարդության զարգացման համահայկական հասարակական կազմակերպությունը** (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս նախագահ Արեւիկ Համբարձումյանի, կնքեցին սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հաստատելու համագործակցության իրենց պատրաստակամությունը:

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն Հուշագրով կողմերը նախատեսում են համատեղ ջանքերի եւ ռեսուրսների ներդրմամբ, ըստ գնահատված կարիքի, իրականացնել

1.1 Կազմակերպության կողմից առաջարկված «Նվիրիր կարդալու որպեսներ» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում գործող «Լոֆթ-Վանաձոր» կենտրոնում: Ծրագիրն իրականացվելու է ՀՀ ԱՍՀ նախարարության կողմից հաստատված ցանկով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների, ինչպես նաեւ հաշմանդամություն ունեցող երեխաների համար՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ եւ վերջինիս ենթակայությամբ գործող հաստատությունների ներուժի ներգրավմամբ:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հուշագրի շրջանակներում Կողմերը համաձայնվում են՝

2.1 Իրենց գործունեությունն իրականացնել թափանցիկության եւ բաց հաղորդակցման սկզբունքով:
2.2 Անմիջապես արձագանքել մյուս կողմի օգնության խնդրանքին՝ խելամիտ ժամկետներում եւ համագործակցության շրջանակում:
2.3 Գտնել ճկուն եւ փոխադարձ ընդունելի լուծումներ այն իրավիճակների համար, որոնք դուրս են Կողմերից յուրաքանչյուրի վերահսկողությունից եւ որոնք կարող են ներազդել ծրագրի իրականացման վրա:

2.4 Ընդունել եւ հարգել այլ շահագրգիռ կազմակերպություններին, որոնց Կողմերից յուրաքանչյուրը հաշվետու է (կառավարությունը, համայնքներ, դոնոր կազմակերպություններ, անհատ բարերարներ, նվիրատուներ եւ այլն):
2.5 Պարբերաբար կիսվել տեղեկատվությամբ՝ օգտագործելով հասանելի էլեկտրոնային կամ այլ համաձայնեցված միջոցներ,
2.6 Կանոնավոր կերպով վերանայել իրենց համագործացությունը եւ մշտապես փնտրել միջոցներ այն խթանելու եւ ամրապնդելու համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Սույն Հուշագրի շրջանակներում Կազմակերպությունը պարտավորվում է.

3.1.1 Հուշագիրը կնքելուց հետո քսանօրյա ժամկետում մեկնարկել համագործակցությունը ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող Միասնական սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային կենտրոնի հետ՝ նախապես ունենալով սոցիալական աշխատակիցների համաձայնությունը՝ մասնակցելու Կազմակերպության կողմից իրականացվող «Նվիրիր կարդալու րոպեներ» ծրագրի իրականացման սեմինարին, որի ընթացքում ներկայացվում է Կազմակերպության առաքելությունն ու նպատակները, «Լոֆթ-Վանաձոր» կենտրոնի հնարավորությունները եւ Ծրագրի գործարկման մեխանիզմները:
3.1.2 Ծրագրի իրականացման գործնական փուլում հետեւել եւ արձանագրել սոցիալական աշխատակիցների կողմից իրականացրած գործողությունները՝ մասնավորապես Ծրագրի շահառուների ներգրավվումը՝ նախապես հաստատված տվյալների ցանկի հիման վրա: Շահառուների ներգավվման գործընթացն իրականացվելու է համաձայն ՀՀ ԱՍՀ նախարարության տրամադրած տվյալների, ՀՀ ԱՍՀ նախարարության հանձնարարականով՝ Սոցիալական աշխատակիցների միջոցով (Ծրագրի եւ «Լոֆթ-Վանաձորի» կենտրոնի ներկայացում վերոնշյալ ընտանիքներին, քարտերի տրամադրում):
3.1.3 Ծրագրի շահառուների համար տրամադրել մուտքի հատուկ քարտեր, որոնք կպարունակեն հստակ ժամաքանակ («կարդալու րոպեներ») «Լոֆթ-Վանաձոր» կենտրոն մուտք գործելու եւ ընթերցանության համար հատկացված ժամանակն օգտագործելու համար:
3.1.4 Շահառուներից յուրաքանչյուրին ապահովել մինչ 2024 թվականի ավարտ գործողության ուժ ունեցող 3.1.3-ում նշված քարտը, որը կպարունակի 6000 րոպե՝ ընթերցանության կազմակերպման համար:
3.1.5 Ծրագրի իրականացման համար դիմել դրամաշնորհների, մասնավոր ընկերությունների եւ նվիրատվությունների, ապահովել համապատասխան միջոցները ծրագրի իրականացման համար:
3.1.6 Ապահովել գրքեր, որոնք համապատասխանում են դպրոցական պարտադիր ընթերցանության ցանկերին, գրահրատարակչության ոլորտի նորարարություններին, շահառուների տարիքային շեմին, ինչպես նաեւ հետաքրքրություններին:
3.1.7 Գրահրատարակչության, գրադարանների, ժամանակակից արվեստի, ինչպես նաեւ հանրակրթության ոլորտներում ՀՀ ԿԳՄՍ նախարարության քաղաքականության շրջանակներում՝ համատեղ ուժերով համալրել կենտրոնի գրադարանային անկյունը, իրականացնել համատեղ հանրահիչռակման եւ իրազեկման արշավներ:

3.1.8 Ներկայացնել գրավոր ամփոփ հաշվետվություն յուրաքանչյուր տարվա վերջում՝ սույն Հուշագրով ստանձնած պարտավորություններից բխող աշխատանքների իրականացման վերաբերյալ:

3.2 Սույն Հուշագրի շրջանակում ՀՀ ԱՍՀ նախարարությունը պարտավորվում է.

3.2.1 Սույն Հուշագրի 3.1.1 եւ 3.1.2 կետերում նշված աշխատանքները կազմակերպելու եւ իրականացնելու համար Կազմակերպությանը տրամադրել անհարաժեշտ տեղեկատվությունը՝ նախապես պայմանավորված ժամկետներում եւ միջոցներով:
3.2.2 Իր իրավասության շրջանակներում աջակցել Կազմակերպության կողմից սույն Հուշագրի նպատակից բխող գործողությունների արդյունավետ կերպով իրականացմանը՝ առաջընթացի եւ արդյունքների վերաբերյալ պարբերական քննարկման ու գնահատման միջոցով:
3.2.3 Աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած խնդիրների դեպքում՝ իր իրավասությունների շրջանակում աջակցել լուծելու դրանք:

3.3 **Սույն Հուշագրի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը պարտավորվում է.**

3.3.1 Իր իրավասության շրջանակներում աջակցել Կազմակերպության կողմից սույն Հուշագրի նպատակից բխող գործողությունների արդյունավետ կերպով իրականացմանը՝ առաջընթացի եւ արդյունքների վերաբերյալ պարբերական քննարկման ու գնահատման միջոցով:
3.3.2 Նպաստել «Լոֆթ-Վանաձոր» կենտրոնի գրադարանային անկյունի համալրմանը:
3.3.3 Կենտրոնը ներառել նախարարության կողմից իրականացվող մարզային կրթամշակութային ծրագրերում: Ըստ անհրաժեշտության գործի դնել նաեւ նախարարության ենթակայությամբ գործող հաստատությունների ներուժը:
3.3.4 Նպաստել Ծրագրի հանրահռչակմանն ու զարգացմանը՝ համապատասխան իրազեկման մեխանիզմներով, համապատասխան հարթակներում:
3.3.5 Աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած խնդիրների դեպքում՝ իր իրավասությունների շրջանակում աջակցել լուծելու դրանք:

4. Կողմերի հավաստիացումները եւ երաշխիքները

Կողմերը հավաստիացնում եւ երաշխավորում են, որ

4.1 Պատրաստ են իրականացնել Հուշագրից բխող իրենց պարտավորությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները:

4.2 Հուշագրի կնքումը եւ կատարումը չի խախտում որեւէ այլ Հուշագրի պահանջ, որում Կողմերը միասին կամ յուրաքանչյուրն առանձին հանդես են գալիս որպես կողմ, ինչպես նաեւ երրորդ անձանց որեւէ իրավունքներ:
4.3 Կողմերը կարեւորում են փոխադարձ հարգանքի եւ վստահության վրա հիմնված համագործակցությունը:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Հուշագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են այն կատարելու պարտականությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով, որը ծագել է Հուշագիրը կնքելուց հետո, եւ որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական եւ արտակարգ դրություն հայտարարելը, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը եւ այլ արտակարգ եւ անկանխատեսելի հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Հուշագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Հուշագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Փոփոխությունները եւ լրացումները

Սույն Հուշագրում կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ: Սույն Հուշագրի փոփոխությունները եւ լրացումները կձեւակերպվեն առանձին համաձայնագրով, որը կհանդիսանա Հուշագրի անբաժանելի մասը: Կողմերը կարող են միակողմանի հրաժարվել Հուշագրից բխող պարտավորությունները կատարելուց եւ վաղաժամկետ լուծել այն, եթե Հուշագիրը կնքելուց հետո Կողմերը թույլ են տվել Հուշագրի էական խախտում: Փոփոխությունների եւ լրացումների մասին նախաձեռնող կողմը մյուս կողմին պետք է տեղեկացնի նախապես՝ գրավոր կերպով տրամադրելով անհրաժեշտ հիմանվորումները:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1 Հուշագիրը կազմված է հայերենով, բաղկացած է 6 (վեց) էջից, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 3 (երեք) օրինակից:
Յուրաքանչյուր Կողմին տրվում է Հուշագրի 1 (մեկ) օրինակ:
7.2 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
www.mlsa.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

LOFT

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

Հասցե՝ ՀՀ, Երեւան, 0010
Հանրապետության հրպ.
Կառավարական տուն 3

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

Հասցե՝ ՀՀ, Երեւան, 0010,
Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2

«ԼՈՖԹ» կրթության, մշակույթի, երիտասարդության զարգացման համահայկական հասարակական կազմակերպություն

Հասցե՝ ՀՀ, Երեւան,
Մոսկովյան 3

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ
(ստորագրություն)

Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
(ստորագրություն)

Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
(ստորագրություն)